

ՆՀԱՆԱՎՈՐ  
ԲՈԼՏԵՎԿԻԿՆԵՐԻ  
ԿՅԱՆՔԸ



ԸՆԿԵՐ ՍԵՐԳՈՆ

087 · 1

F - 42

ՊԵՏՏՐԱՒՏ

ԳՐՈՒԹԱՐԱՐԻ ԲՈՂՈՔ ԵՎ ԿՐԵԱԿԱՆ ՄԻԱՅՆԱԿ

23 JUN 2009

ՆՇԱՆԱԳՐ ԲՈՒՀԵՎԵԿՆԵՐԻ ԿՑԱՆՔԸ

087.1

1F - 42

ԱՐ

Ա. ԲԵԶԲՈՐՈԴՈՎ

# ԸՆԿԵՐ ՍԵՐԳՈՆ

Կրտսեր և միջին տարիքի համար

Թարգմ. Ա. Ղարաբյանլյան

Պ Ե Տ Հ Ա Տ  
ՀԱՅՈՒ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՌԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲՈՒԺ-  
ՅԱ Վ. Ա. Ն.  
1938

ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐ ԳՐԻԳՈՐԻՅ ԿՈՆՍԱՆՏԻՆՈՎԻՉ  
ՈՐԶՈՒԽԿԻՉԵՑԻ ԿՅԱՆՔԻ ՄԱՍԻՆ

### 1. „ԽԱՂՈՂԻ ԶԱՄԲՅՈՒՂԵՐԻ”

Գնացքը սլանում եր դեպի Հյուսիս: Հեռու՝ հետեւ վում մնացին դղրդացող, ծխոտված տունելները, վորոնց մեջ շոգեքարշը որընթաց ներս եր թռչում կատաղի, խոպոտ սուլոցով. հետեւում մնացին և' գորչ զառիթափերը, և' կավճի փուլերը, և' լեռների թեթև զառիվայրերը՝ ծածկված ծաղկող բալինիներով և գարնանային հյութալի խոտով: Գնացքը դղրդալով անցավ փրփրալից պղտոր լեռնային վտակների վրայով գցված կամուրջներով, շրջապտտեց կաղնուտով և տոնիներով ծածկված՝ կովկասի վերջին լեռնաճյուղերը՝ և զուրս թռավ դեպի աղատ, ընդարձակ տափաստանը:

Յեվ, գնացքից առաջ ընկնելով, գարնանային հողմից զրնդացող բարակ հաղորդալարերով սլանում եր տափաստանի վրայով հեռագիրը. «Խոստով Դոնի վրա ժանդարմական վարչության ոռոմիստր Սուսլովին յերբորդ կարգով խաղողի զամբյուղ դիմավորեցեք 77679 վագոնը Զայչիկ»:

Գնացքն անցավ Ռոստովը և սլանում եր քարածխի փոշուց սևացած, ցանցկեն բրեմսբերզների (արգելակասարլը), ծխապատ գործարանների և Դոնբասի աղուտային, արեից կիզլած բլրակների մոտով: Յեվ դարձյալ, գնացքից առաջ անցնելով, հաղորդալարերով թռչում եր հեռագիրը. «Խարկով ժանդարմական վարչության ոռոմիստր Սալոմենիկովին յերրորդ կարգով խաղողի զամբյուղը դիմավորեցեք 77679 վագոն Ռիժից»:

Գնացքն արդեն անցել եր Կուրսկը և ամբողջապես



2945

38

ապիտակ փոշով ծածկված՝ մոտենում եր Տուլային,  
յերբ Տուլայի հեռագրիչն ընդունեց և հորանջելով թըլի-  
թըլսկացրեց և իր հերթին հաջորդ կայանին հաղորդեց  
անցողիկ հեռագիրը. «Մոսկվա Պահնորդական բաժին  
արագընթաց 5 բիս վագոնում յերրորդ կարգի 77679  
՚խաղողի զամբյուղը ուղեկցում և Զայկան կազմակեր-  
պեցեք դիմավորումը շուտ փչացող և ոստմիստր Աս-  
պոժնիկով»:

Գնացքը հասավ Մոսկվա: №77679 վագոնից, իրար  
հրելով ու աղմկելով, դուրս յեկան ճամբորդները  
պարկերով, կապոցներով, սունդուկներով և արկղե-  
րով:

Ո՞ւր ե, հապա, խաղողի զամբյուղը: Ճանապարհին  
կորե՞լ ե, ինչ ե: Վոչկոք վագոնից դուրս չբերեց խսի-  
րի մեջ կարած զամբյուղ, խաղողի զամբյուղը:

Ահա, վերջապես, վագոնի հարթակից իջավ վեր-  
ջին ճանապարհորդը—բարձրահասակ, վայելչակազմ  
մի յերիտասարդ, համարյա պատանի: Նա հագած ու-  
ներ աշնանային սև վերարկու: Քիչ թեք ծածկած գըլ-  
խարկի տակից դուրս եյին թափվել նրա խիտ, դանդուր  
մազերը: Նա թեթև ցատկեց ասֆալտե պլատֆորմի  
վրա և յուր շագանակագույն փայլուն աչքերով ու-  
րախ նայելով շուրջը՝ սղալեց սև բեղերը:

Յերկու հոգի, վորոնք մինչ այդ անտարբեր ու  
հանդարտ կանգնած եյին, կայարանի պատին հենված,  
անմիջապես ցնցվեցին և արմունկներով հրեցին իրար:

Ամբողջ որը, ուր ել վոր գնար, վոտով կամ կառ-  
քով, այդ սեահեր զվարթ պատանին, նրա հետևից  
կրնկակոխ, գաղտագողի գնում եյին գնացքի մոտ  
նրան դիմավորող յերկու հոգին:

Յերեկոյան նրանք ուղեկցեցին նրան Նիկոլաևյան  
կայարանը, և յերբ գնացքը շարժվեց, նրանցից մեկը  
ցատկեց վերջին վագոնի վոտանակի վրա, իսկ մյու-  
սը վաղեց հեռագրատուն և հեռագիր տվեց. «Պետեր-  
բուրդ Պահնորդական բաժին 2 գնացքով 372 վագոնով

խաղողի զամբյուղը ուղեկցում և Շչուկան դիմավո-  
րեցէք»:

Պետերբուրգում «խաղողի զամբյուղը» դիմավորե-  
ցին՝ ինչպես հարկն եր... բանտի սև կառեթով զվարթ  
պատանուն տարան Գորոխովյան փողոց՝ պահնորդա-  
կան բաժինը:

Պատանին հանդիսում եր ու զվարթ: Արևելյան փա-  
փուկ ակցենտով նա ասում եր իր ձեռքերը բռնող հե-  
տախույզներին:

— Դու զգույշ յեղի՛ր, խնդրում եմ, ինչո՞ւ յիս ինձ  
բռնել: Յես քեզ չեմ ճանաչում, դու իմ ընկերը չես:

Նա ներկայացրեց անձնագիրը. «Հասան Նավ-  
բուլ ողլի Հյուսեյինով, Թիֆլիսի նահանգի Բորչալվի  
գավառի Սարգան գյուղի բնակիչ»: Անձնագիրը ճիշտ  
եր, այնուամենայնիվ պատանուն բանտ նստեցրին, իսկ  
Սարգան գյուղի ուրյադնիկին հեռագրեցին. Սարգան  
գյուղում կա՞ արդյոք այսպիսի բնակիչ—Հասան Նավ-  
բուլ ողլի Հյուսեյինով:

Յերկու որից պատասխան յեկավ, այդպիսի բնա-  
կիչ կա:

Սա՛ ինչ բան ե: Յերկու ամիս ե, վոր այս մարդուն  
հետևում եյինք թե՛ Պետերբուրգում, թե՛ Թիֆլիսում  
ե թե՛ Բագվում... ահա նա նորից յեկել ե Պետեր-  
բուրգ: Նա թափառում ե ամբողջ Ռուսաստանում,  
յերկում ե, վոր ընկած-յելած տղա յե,— իսկ այժմ  
բանից դուրս ե գալիս, վոր դա ինչ-վոր Նավրուղ  
Հուսեյինով ե, կովկասյան աղքատիկ գյուղի խա-  
զաղ բնակիչ:

Դարձյալ հեռագիր ե սլանում դեպի Սարգան գյու-  
ղը՝ յե՞րբ ե Հյուսեյինովը մեկնել և ո՞ւր:

Յերկու որից պատասխան ե գալիս. յերբեք վոչ մի  
տեղ չի մեկնել, տանը նստած պանիր ե պատրաստում:

Հյուսեյինովը տանը նստած՝ պանիր ե պատրաս-  
տում: Իսկ ո՞վ ե սա:

Միայն յերկու շաբաթվա մանրազնին աշխատան-

քից հետո՝ մատների արտատպումից, լուսանկարներից, նշաններից, հետախոռյոնների և պրովոկատորների զեկույցներից — պահուղդները վերջապես «պարզեցին» անհայտին, բոլցեկիկների կենտկոմի անդամ, Գրիգորիյ Որջոնիկիձեն, կուսակցական ծածկանունը «Սերգո»:

Ահա թե ո՞վ եր զմարթ պատանին:

## 2. ՊԱՐՁԵՑԻՆ

Պահուղական բաժնի աշխատակիցները Դրիգորիյ Որջոնիկիձեյին վաղուց ի վեր շատ լով ճանաչում ենին. համարյա ամեն մի գործ ակալական ամփոփման մեջ նրանք հիշատակում եյին նրա ազգանունը:

Այդ նա յեր, վոր դեռ 1901 թվին «պղտորում եր» Թիֆլիսի բուժակային գպրոցի սշակերտության մրտքերը, և այդ գպրոցի ուսուցիչները տանը, իրենց բարձերի տակ, հաճախ գտնում եյին կարծես հրաշքով այնտեղ ընկած հեղափոխական թուուցիկներ:

Այդ նա յեր, վոր 1903 թվին մտավ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության մեջ, իսկ 1905 թվին, 19 տարեկան հասակում, արդեն զեկավարում եր Գուղառուտիի կուսակցական կազմակերպությունը և Սուբումիի բոլցեկիկների շրջանային կոմիտեյի անդամ եր:

Այդ նրան՝ Գրիգորիյ Որջոնիկիձեյին եր, վոր 1906 թվի հունվարի 6-ին վոստիկանությունը բանեց Գուղառուտիի մոտ, Բոմբարի գյուղում, յերբ նա բեռնաթափում եր հեղափոխական բանվորական դրուժինաների համար բերված զենքերի տրանսպորտը:

Վոր բանելից եր նա, այդ քսանամյա պատանին ձարել մի ամբողջ բարկաս հրացաններ, ատրճանակներ և ձեռնանոնակներ: Վոր բան փող եր հարկավոր այսպիսի մի զինանոց գնելու համար:

Բանից գուրս ե գալիս, վոր նա այդ զենքերն ամենենին չեր ել գնել: Նա մեծ զժվարությամբ այդ ձարել եր վրացական ազնվական-ինտելիգենտների կուսակ-

ցության՝ սոցիալ-Փեղերալիստների մոտ: Ֆեղերալիստները զենքերը գնել եյին արտասահմանում ու չուզենավով բերել Բաթումի: Սակայն վոստիկանությունն իմացել եր այդ մասին, և չոգենալին շտագուղեվորվել եր Գագրի: Այսուեղ զենքերը բեռնաթափել եյին և թաղել աբխազական մի իշխանի կարվածահողում: Իսկ Որջոնիկիձեն, լսելով այդ մասին, յեկավ Փեղերալիստների մոտ և պահանջեց, վոր զենքի մի մասը հանձնեն բոլցեկիկներին:

— Զեր ինչի՞ն են պետք հրացանները, — ասում եր Սերգոն Փեղերալիստներին: — Ո՞մ եք գուք զինելու: Զեր հետեւյց վոչվոք չի գալիս: Նայեցե՛ք ձեր չուրջը, վոչվոք չկա: Իսկ մենք մասսայական կուսակցություն ենք, մեզ հարկավոր ե զինել բանվորներին:

Նա յեկավ Փեղերալիստների առաջնորդների մոտ մեկ անդամ, յերկրորդ, յերրորդ անդամ: Վերջապես Փեղերալիստները զիջեցին, զենքերի մի մասը տվին:

Մութ, խավար գիշերին տաս ընկերներով Սերգոն բարկասով Գուղառուտիլու մեկնեց Գագրի՝ հրացանները, ատրճանակները և փամփուշտները բերելու համար: Փորեցին հանեցին զենքերը, բեռնեցին ամբողջ բարկասը և յետ եյին գալիս, բայց ափի մոտ, յերբ բեռնաթափում եյին զենքերը, կազակները և ժանդարմները բռնեցին նրանց:

Հինգ ամիս Սերգոն նստեց Սուխումիի բանտում և, յերախավորությամբ զուրս գալով, անմիջապես փախավ, գնաց նորից ընդհատակյա հեղափոխական աշխատանքով պարագելու:

Այդ նա յեր, վոր յեկավ Թիֆլիսի Սիխայլովսկայա փողոցի վրա գտնվող գալրոցի նկուղը՝ խորհուրդներ և ոգնություն ստանալու համար ընկեր Ստալինից, վորն այդ ժամանակ «Դրո» (վոր նշանակում ե «Ժամանակ») թերթի խմբագիրն եր: Դեռ այն ժամանակ Ստալինը նվիրեց նրան իր նոր գրած բրոցյուրը ՌՍԴԲ կուսակցության Ստոկուլմի համագումարի մասին:

Այդ նա յեր, վոր հասարակ, համեստ բուժակը

տնվանտակ 1907թվին բնակություն հաստատեց Բագդի մոտ գտնվող Խոմանի գյուղում, Շամսի Ասաղուբայելի նավթահանքերում։ Համեստ բուժակն այդ ժամանակ Ստալինի, Շահումյանի, Զափարիձելի և Յավանդարյանի հետ բոլշևիկների Բագդի կոմիտեյի անդամ եր արդեն։

1907թվի մայիսմեկյան ցույցի ժամանակ, յերբ գործադրությունը եյին արել Բալտաստինի Համարյա րոլոր նավթահանքերը, յերբ բոլշևիկներն Ստեփան Ռազինի լեռան վրա միտինդի եյին ժողովել Բագդի յերեք հագար պրոլետարներին, նրան գարձյալ իր ճանկը գցեց վոստիկանությունը։

Քսան վեց որ նա մնաց Բայիլովյան բանտում, իրեն ներկայացնելով ինչ-վոր Կուչիսչվիլու տեղ, և այգակես ել աղատ թողնվեց առանց ճանաչվելու։

Վերջապես պահնորդական բաժինը հետապնդեց և ձերբակալեց նրան 1907թվի նոյեմբերին։

Նրան նատեցրին Բայիլովյան բանտը, վորն իր սեփական միջոցներով շինել եր և վորակես նվեր տվել եր ցարական կառավարությանը՝ նավթարդյունաբերող միլիոնատեր Թաղիյեվը։ Զորս ամսից հետո Սերգոյին դատեցին և դատապարտեցին՝ ցմահ աքսորել Սիբիր։

Այդ ժամանակ նա գեռ լրիվ 22 տարեկան չկար։  
Ետապով, բանտից-բանտ, քշում եյին նրան Սիբիր։ Ճանապարհը կարճ չեր՝ Բագդից մինչև Յենիսեյին նահանգի Պինչուկյան գավառակի Պոտասկու գյուղը։

—Թող այժմ նա թախծի, —ուրախանում եյին պահնորդականները։

Բայց նա յերկար «չթախծեց»։ Աքսորավայր հասնելուց յերկու ամիս հետո նա փախավ։ Նա նավարկեց Յենիսեյի հոսանքով դեպի վեր, վոտով անցավ տարչայի արահետներով, ծիռվ անցնում եր կոնաբլուրներն ու լեռնաշղթաները։ Վերջապես նա գուրս յեկալ յերկաթուղու վրա, նստեց գնացքը, — և կարծես բոլորովին չքացավ այդ 22 տարեկան յերիտասարդը։

Պահնորդական բաժինը վինտոռում եր նրան ամբողջ Ռուսաստանում։ Մեկ անդամ Բագդիում վոստիկանությունը վրա տվեց բոլշևիկների Բագդի կոմիտեյի անդամ Ալյոշա Զափարիձելի բնակարանին։ Բանից դուրս յեկավ, վոր սենյակում, բացի Ալյոշայից, գտնվում եյին ուրիշ յերկու յերիտասարդներ։ Պրիստավը վոստիկաններ կանգնեցրեց՝ տան թե՛ գլխավոր մուտքը և թե՛ հետնասանդուղքը հսկելու, իսկ ինքը վաղ տվեց պետի մոտ իմանալու, թե ի՞նչ անի։ Միայն Զափարիձելի՞ն վերցնի, թե յերեքին ել միասին։

— Վերցրե՛ք բոլորին, — ասացին պրիստավին, — բոլորին, բոլորին բռնեցե՛ք։

Սակայն, յերբ պրիստավը հելվալով հետ վագեց, սենյակում հանդիսանուածուղքը հսկելու, իսկ ինքը վաղ տվեց պետի մոտ իմանալու, թե ի՞նչ անի։ Միայն Զափարիձելի՞ն վերցնի, թե յերեքին ել միասին։

Ինչպե՞ս ո՞ւր, իսկ վոստիկաննե՞րը։

Բանից դուրս ե գալիս, վոր Ալյոշայի կինը՝ Վարոն, բակում հսկող վոստիկաններ տաս ոռորդի յեր տվել և խնդրել, վոր գնա ծխախոտ բերի։ Վոստիկանը, այդ վոչսարի նման հիմարը, վերցնում է փողը և վտագում ծխախոտի։ Իսկ Ալյոշայի յերկու հյուրերը ծիծաղելով՝ գլխարկները դրել եյին գլուխները և հանգիստ կերպով ծլկվել եյին։

Այդ յերկուսից մեկը Սերգո-Գրիգորիյ Որջոնիկիձեն եր, իսկ մյուսը — Կոբան — Իոսիֆ Ստալինն եր։

Բոլոր քաղաքներում և գյուղերում վոստիկանությունը վինտոռում եր անրոնելի Սերգոյին։ «Գրիգորիյ Կոնստանտինովիչ Որջոնիկիձեն։ Հասակը միջակից բարձրը, մազերը մուգ, խիտ, յերեսը պարզ ու մաքուր, աչքերը շագանակագույն, խոշոր»։

Իսկ նա այդ ժամանակ Ռուսաստանում չեր։ Բոլշևիկյան կուսակցությունը նրան Պարսկաստան եր ուղարկել։ Իրանի արևից այրված սարահարթերով Սերգոն առաջնորդում եր Սարգար-Մուղու հեղափոխական ջոկատը։ Կովի յերտանում պարսից ժողովրդի

աղասության համար՝ ոռուսական կոլոնիզատորների  
(գաղութացողներ) և շախսեանի հետադիմական ա-  
ռաջնորդների գեմ:

Իսկ գիշերով, վրանում, ճարպամոմի մնացորդի  
գողոջուն լույսի տակ նա նամակներ եր գրում.

## ՀԱՐԳԵԼԻ ԸՆԿԵՐ.

Զեր նամակը և արձանագրություններն ստացա.  
Վորի համար հայտնում եմ իմ ընկերական շնորհակա-  
լությունը: Ինտերնացիոնալ ակումբի համար կենտրո-  
նական որգանը չի ստացվել: Հենց վոր ստացվի, բա-  
ժանորդագինը կվերցնեմ և կուղարկեմ: Արձանագրու-  
թյունների համար հասանելիք չորս ֆրանկը նմանա-  
վես կուղարկեմ բաժանորդագնի հետ: Մինչև այժմս.  
ինչ վոր ուղարկել եք, ստացվել ե... «Գոլոս»—ը են-  
գելցինները հասցնում են ինձ, այնպես վոր դուրս գրե-  
լու կարիք չկա: Մեծ հանույնով կարդացի «Որագրե-  
րը»...

Պարսկատանում մտադրվում են սոցիալ-դեմոկ-  
րատական կազմակերպություն ստեղծելու. այդ մա-  
սին գուցե թղթակցություն տամ Կ.Ռ-ին:

Ընկերական վողույններով Սերգո:

Իսկ նամակի վերևում գրված եր Ռաշտ (Պարսկատ-  
առան):

Այս նամակները գնում եյին միւնույն հասցեյով՝  
Փարիզ, խուլ ծայրամասի բոնյե փոքրիկ փողոցը,  
Մոնսուրի պարկից վոչ հեռու, հենց քաղաքի պատ-  
նեշի մոտ:

Այս նամակներն ուղղված եյին Լենինին:

Այնուհետև Սերգոն ինքն ել հայտնվեց Լոնժումո-  
յում, Փարիզի մոտ, Լենինի կուսակցական դպրոցում:

1911 թվի ոգոստոսին Սերգոն վերադարձավ Ռու-  
սաստան, Վլադիմիր Իլիչի առաջադրանքով բուշեիլ-  
ների համառուսական կոնֆերանս նախապատրաստելու  
և անցկացնելու:

Պահնորդական բաժնի աղենտ Բրենդիսկին, վոր  
այդ ժամանակ գտնվում եր Լայպցիգում, այս մասին  
Հայտնեց պահնորդական բաժնին. «Գալիս են, բռնե-  
ցե՞ք»:

Բայց Սերգոն խուսափեց: Մյուսներին բռնեցին,  
իսկ ինքը փախալ: Հետո պահնորդական բաժնին  
խացավ, վոր բուշեիլները բազվում խորհրդակցու-  
թյուն են հրավիրում: Լավագույն հետախույզները  
նետվեցին թագու: Նրանք հոտառությամբ զգում եյին,  
վոր նա, հենց այստեղ՝ իրենց քթի տակ ե կտնվում:  
Նրան փնտռում եյին որ ու գիշեր: Բռնում եյին բոլոր  
կառակածելի մարդկանց, այն բոլորին, վորոնց մատնա-  
նշում եյին հետախույզները և պրովոկատորները: Գը-  
նացքում ձերբակալեցին խորհրդակցության՝ Մոսկվա-  
յի և Պիտերի պատվիրակներին, բազվում փողոցի մեջ  
բռնեցին Անդրկովկասի պատվիրակ Ստեփան Շահում-  
յանին, տակն ու վրա արին մի շարք կոնսպիրատիվ  
ընակարաններ, իսկ նա նորից կարողացավ ծլկվել:  
պարզվեց, վոր խորհրդակցությունը տեղափոխել եյին  
թիֆլիս:

Պահնորդները նետվեցին Սերգոյի հետքերով:  
Բայց նա արդեն հեռաւ յեր: Նա դարձյալ Փարիզում եր  
զտնվում:

Լոնժումոյում կաշեգործ բանվորի քարաշեն փոք-  
րիկ տան յերկրորդ հարկում նա արդեն պատմում եր  
Լենինին Ռուսաստանի գործերի մասին, նրա աչքերն  
ուրախ փայլում եյին, իսկ լայն ճակատին ընկած եր  
առ, անհնագանդ մազերի մի փունջ:

Այսուհետև կայացավ բուշեիլների կոնֆերանսը  
Պրագայում: Կոնֆերանս եյին սողոսկել յերկու պրո-  
վակատոր՝ Մալինովսկին և Ռոմանովը: Պահնորդա-  
կան բաժնին նրանցից խացավ, վոր բուշեիլյան կու-  
սակցության կենտրոնի մեջ Լենինի, Ստեփանի, Սպան-  
գարյանի, Շվարցմանի հետ ընտրված ե նա՝ Գրիգորիյ  
Ռոջոնիլիձեն, — ընդհատակյա ծածկանունը «Սեր-  
գո»...

Ինչպես ցնծաց Պետերբուրգի պահնորդական քառժինը, յերբ «պարզված» Հասան Նավրուզ ողլի Հյուսիսինովը դուրս յեկավ հենց այդ ձեռք չընկնող Սերգոն:

Վեց ամիս հետո Պետերբուրգի շրջանային դատավանն աքսորավայրից փախչելու և բոլշևիկյան աշխատանքի համար նրան դատապարտեց յերեք տարվա տաժանակիր աշխատանքի, վորից հետո՝ Սիբիր, ցմահ աքսորի:

1912 թվի հոկտեմբերին նրան շղթայակապ տարան Շլիսելբուրգի բերդը:

### 3. ԻԼՅԻԶԻՆ ԶԵՆՔ ՏԱ

Այդ ժամանակներում կար վրացական մի առած «ում վոր ճամպա զնես Սիբիր, ել յետ գալու մի՛ սպասիր»:

Սարսափելի յեր այդ բառը—Սիբի՛ր: Հարյուրավոր և հազարավոր մարդկանց կազմակների և զինվորների պահակախմբերի ուղեկցությամբ տանում եյին այնտեղ, տաժանակիր աշխատանքների, պատժավայրում:

Մեր հայրենիքի բոլոր լավագույն մարդիկ—և Լենինը, և' Ստալինը, և' Սվերդլովը, և' Պետրովսկին—յեղել են Սիբիրում, բանտերում և աքսորավայրերում:

Սիբիր ընկավ նաև՝ ընկեր Սերգո Որջոնիկիձեն: Մինչ այդ՝ յերեք տարի նստեց նա Շլիսելբուրգի բերդի խոնավ ու մռայլ զնդաններում: Բանտային տաժանելի ուժեմի մեջ համարյա խլացած՝ 1915 թվի հոկտեմբերին նրան ետապով քշեցին Սիբիր:

«Ում վոր ճամպա զնես Սիբիր, ել յետ գալու մի՛ սպասիր»:

Բայց Սերգոն չկորավ, չմեռավ Սիբիրում: Փետըրվարյան հեղափոխությունը նրան ազատեց աքսորից, իսկ հունիսին նա արդեն դտնվում եր Պետրովագրում՝ Լենինի և Ստալինի կողքին:

Ահա իրա՞ Սերգո Որջոնիկիձեյի պատմածը, վորը առաջրված և 1926 թվի նոյեմբերի 7-ին թիֆլուսի «Զարյա Վոստոկա» թերթում, այն մասին, թե ինչպես Ստալինը և Սերգոն Լենինին յունկերների և հակահեղափոխականների ձեռքը չտվին:

«1917 թվի հուլիսի 3-4 դեկտեմբերից հետո սկսվեց ժեր կուսակցության և մեր առաջնորդների կատաղի հետախնդումը: Լենինին հայտարարել եյին գերմանական լրտես, և միևնույն ժամանակ հրաման եր տրված նրա ձերբակալման մասին:

Հիշում եմ՝ մի խումբ մարդիկ, վորոնք խոնվել եյին բուրցեվի — Ալիկսինսկու և հարյուրյակային թերթի շուրջը, վորը փակցված եր Նեվսկայա պողոտայի պատերի վրա և վորն ապացուցում եր, թե Լենինը գերմանական լրտես և այդ մտուն կան անհերքելի տվյալներ: Հիշում եմ վորմանց Փշոցն ու ուրախ դժմքերը, իսկ մյուսների տարակուսանքն ու շփոթվածությունը:

Յունկերները վազվզում եյին ամենուրեք, վնտում Լենինին, բայց նա արդեն բնակարանում չեր: Խոսակցություններ՝ «Փախել ե Վիլհելմի մոտ», «Վո՞նց չե, կդանես նրան»:

Տալրիկյան պալատ: Այստեղ միմիայն խոսում են յերեկվա որվա մասին, մեր յելույթի և այն մասին, վոր մեր կազմակերպությունում ամեն ինչ բարեհաջող չէ: Այդպես են ասում ծախ եսերները, այդպես են ասում նույնիսկ մի քանի աչքի ընկնող բոլշևիկներ: Բանվորական ուսուցներում մի բողեք շփոթություն ե տիրում, սակայն այդ շուտով անցնում ե: Պավլովցիների և իզմայլովցիների մեջ բավականին պարզութեարպով լրտեսներ: «Խարեցին, մենք չգիտեյինք, վոր բոլշևիկները գերմանական լրտեսներ են»: Լենինին փնտում են, բայց չեն դտնում: Մեր ընկերներից վորմանք հարց են զնում այն մասին, թե չի կարելի, վոր Լենինը թագնվի, նա պետք ե ներկայանա: «Այլ կերպ կուսակցությունը հնարավորություն չի ունենա արդարանալու լայն մասսաների տառջ...»

...Ստալինի հետ հանդիպում ենք Տավրիկյան տղալատում: Գնում ենք միասին Լենինի մոտ, նա պետք է վորլինի Պոլետայելի բնակարանում (Պետական Դռչակյան նախկին պատգամավոր), Պուտիլովյան դործարանի բանվոր), կարծեմ 8-րդ Ռոժեստվենսկայա փողոցի վրա: Շտապում ենք այնտեղ, վորովհետեւ Տավրիկյան պալատում համառ լուրեր ելին պտտվում, վոր Գ. Պոլետայելը, ըստ վոստիկանության դեպարտամենտի արխիվի տվյալների, պրովոկատոր ե: Շտապում ենք Իլյիչի մոտ, պետք ենրան նախազգուշացնել այդ մասին, պետք ե տեղափոխել նրան այնտեղից, ապա թե վոչ կարող են հարձակվել Պոլետայելի բնակարանի վրա և այնտեղ գտնել Իլյիչին: Դալիս ենք, բայց նա արդեն չկա: Բակում հանդիպում ենք Պոլետայելի կնոջը. նա հայտնում է մեզ, վոր Լենինն իրենց մոտից տեղափոխվել ե Ա. Ալիլույեվի բնակարանը, նույն ուայոնում (փողոցը չեմ հիշում): Նա ծիծաղելով պատմեց մեզ, թե ինչպես Պոլետայելին նույնպես մեղադրում են պրովոկատորության՝ մեջ: Գնացինք Ալիլույեվի մոտ: Մտանք նրա բնակարանը:

Վ. Ի. Լենինը և Ն. Կ. Կրուպսկայան այնտեղ ելին: Հազիվ ելինք մենք նստել, յերբ ներս մտավ Նոդինը: Խոսակցություն սկսվեց այն մասին, թե պետք ե արդյոք Վլադիմիր Իլյիչը ներկայանա և իրեն ձերբակալել տա: Նոդինը բավականին վախվիսելով խոսեց այն մասին, վոր պետք ե ներկայանալ և դոնբաց դատարանի առաջ ճակատամարտ տալ: Վլադիմիր Իլյիչն իրեն հատուկ պարզությամբ ապացուցեց, վոր վոչ մի դռնբաց դատ չի լինի: Մտալինը կտրականապես դեմ եր իշխանության ներկայանալուն: «Յունկերները մինչև բանտը չեն հասցնի, կսպանեն ճանապարհին», — ասում եր նա: Իլյիչը, ամեն ինչից յերեւմ եր, վոր նմանապես հակառակ եր, բայց նրան մի քիչ շփոթեցնում եր Նոդինը:

Հենց այդ ժամանակ ներս ե մտնում ՅԵ. Ստասովան և հայտնում Տավրիկյան պալատում պտուղող նոր լուրի մասին, վոր, երբ թե, վոստիկանության դեպարտամենտի արխիվի վաստաթղթերի հիման վրա, Լենինը պրովոկատոր ե: Այս խոսքերը Իլյիչի վրա աներևակայելի ուժեղ տպավորություն թողին: Նյարդարեցն դողը ծամոեց նրա դեմքը, և նա ամենայն վճռականությամբ հայտարարեց, թե հարկավոր ե, վոր ինքը բանտ նստի: Իլյիչն այդ հայտարարեց առարկություն թույլ չտվող տոնով:

Ինձ ու Նոդինին ուղարկում են Տավրիկյան պալատը՝ բանակցելու Համառուսական Կենտղործկոմի նախագահության և Պետրոգրադի խորհրդի անդամ Անիսիմովի հետ Իլյիչին բանտում պահելու պայմանների մասին: Մենք պետք ե աշխատելինք յերաշխավորություն վերցնել, վոր Իլյիչը գաղանացած յունկերների ձեռքով չի հոչումի: Պետք եր հաջողեցնել, վոր Իլյիչին նստեցնելին Պետրոպավլովսկում (այնտեղի կայազորը մերն եր), իսկ յեթե նրան կրանտարկեն «Կրեստի»-ում, ապա պետք ե լիովին յերաշխավորություն ստանալ, վոր նրան չեն սպանի և վոր դռնբաց դատ կնշանակի: Դրական պատասխանի գեպքում Անիսիմովը յերեկոյան ավտոմեքենայով կցա կկանգնի 8-րդ Ռոժեստվենսկայա փողոցի վրա պայմանագըրված սրահի մոտ, վորտեղ նրան կղիմավորի Լենինը, և այնտեղից Իլյիչին կտանի բանտ, վորտեղ, իհարկե, նրան կվերջացնելին, յեթե միայն վիճակված լիներ, վոր այդ մեծագույն հանցազործ ախմարությունը կատարվեր:

Նոդինի հետ միասին յեկանք Տավրիկյան պալատը և գուրս կանչեցինք Անիսիմովին: Պատմեցինք նրան Իլյիչի վորոշման մասին և պահանջեցինք լիովին յերաշխավորություն: Պետրոպավլովկայում պահելուն նա չհամաձայնեց: Ինչ վերաբերում ե «Կրեստի»-ում յերաշխավորելու մասին, հայտնեց, վոր, իհարկե,

ձեռք կառնվեն բոլոր միջոցները։ Յես կտրուկ կերպով պահանջեցի նրանցից բացարձակ յերաշխավորություն (վոր, իհարկե, վոչվոքչեր կարող տալ), սպառնալով, վոր յեթե մի բան պատահի՝ նրանց բոլորին կկոտորենք։ Անխիմովը Դոնքասի բանվոր եր։ Ինձ թվում եր, վոր այդ գործի հոկայական պատասխանատվությունը նրան ևս սարսափեցնում եր։ Մի քանի բոպե ևս, և յետ հայտարարեցի նրան։ «Մենք իլյիչն չենք տա ձեզ»։ Նոդինը նույնպես համաձայնվեց այս բանին…

...Նոգինը մնաց, յես շտապեցի Լենինի մոտ։ Ստալինը դարձյալ նրա մոտ եր (կարծեմ, հենց այնտեղ ել ապրում եր)։ Յես յերկու խոսքով հաղորդեցի նրանց Անխիմովի հետ ունեցած իմ խոսակցության մասին ու Հունաչարսկու կարծիքը և ավելացրի, վոր Անխիմովը չի իմանում, թե վաղն ինքն ո՛ւմ ձեռքում կլինի։ Վորչեցինք, վոր այդ մասին այլևս վոչ մի ՚խոսք լինել չի կարող։ Իլյիչը պետք է հեռանա քաղաքից։ Ստալինն իր վրա վերցրեց Լենինի մեկնումը կազմակերպելու գործը։ Ինձ առաջարկվեց անհապաղ խուզել տալ մազերս և զնալ Իլյիչի հետ։ Յես շտապեցի վարսավիրանոցը, բայց Իլյիչը, չսպասելով իմ վերադարձին, սեսպորտեցկացի մի բանվորի հետ բարեհաջող կերպով հեռացել եր քաղաքից։

Մի քանի որից հետո Ստալինն ինձ առաջարկեց գընալ Լենինի մոտ, վորպեսզի, մի կողմից, տեղեկություններ հաղորդեմ նրան, և մյուս կողմից՝ դիրեկտիվներ ստանամ նրանից։ Ինձ տվին մի բանվորի հասցե, վորն ապրում եր Սեստրորեցից վոչ հեռու (մեկ կամ յերկու կայարան այս կողմը), և պարու (նշանարան)։ Մեծ զգաւշությամբ յես ձեռնամուխ յեղա այդ գործին, յերկուուղ կրելով, վոր չլինի թե ինձ հետ կապվի վորեւել լրտես, և այլպիսով բացվի Վլադիմիր Իլյիչի թագստյան տեղը։

Կայարան հասա զիշերով։ Քիչ թափառելուց հետո յես գտա այն տունը, վորտեղ ապրում եր հիշյալ բանվորը։ Ինքը՝ բանվորը տանը չեր։ Ինձ ընդունեց նրա

կինը։ Յես նրան ասացի պարուը, բայց մեծ թյուրիմացություն առաջացավ։ Ինձ չեյին ասել պատասխանի պարուը, և մենք չփոթվեցինք։ Ընկերությունը կինը մի կողմից չկարողացավ թաղյնել, վոր ինքը գիտե, թե վորտեղ է Լենինը, մյուս կողմից՝ կտրականապես հրաժարվեց ցույց տալ նրա տեղը։ Յես սկսեցի համոզել նրան, վոր յես իրենց մարդն եմ, վոր ինձ ուղարկել ե կենտկոմը, բայց նա մնաց անդրդվելի։ Յես ինձ անչափ անհարմար եյի զգում։ Հարկավոր եր, վոր յես տեսնեյի Իլյիչին։ յես անչափ ցանկանում եյի տեսնել նրան և միևնույն ժամանակ զգում եյի, վոր լավ բան չեմ անում, համոզելով խոսակցիս խախտել կոնսպիրացիայի կարգը։

Յես վերջնականապես կորցրել եյի հույսս և պատրաստվամ եյի գնալու, — այդ ժամանակ նա ինձ կանոնացրեց և կանչելով յուր 9-10-ամյա վորդուն՝ ուղարկեց ինձ նրա հետ։ Մենք գնացինք լճի ափը, նավակ նստեցինք և, անցնելով մյուս ափը, գնացինք թփուտների միջով։ Յես իմ մեջ վորոշել եյի, թե Լենինն ապրում ե վորեւ ամառանոցում։ Հնազանդ գնում եյի իմ ժանուկ ուղեկցի հետեւից։ Զանկարծ մենք կանդ առանք մի փոքրիկ խոտհարքի մոտ, վորտեղ կար ՚խոտի փոքրիկ դեղ։ Յերեխան կանչեց մեկին՝ անունը տալով։ Յես վոչինչ չեյի հասկանում։ Դուրս յեկավ ինչ-վոր մի ժարդ։ Նա այդ տղայի հայրն եր։ Բացեկցինք իրար։ Բացարձեցի, թե ինչո՞ւն ե բանը, և այլն։ Կարծում եյի՝ կտանի Լենինի մոտ։

Այդ պահին ինձ մոտենում ե բեղերն ու մորուքը սակրած մի ժարդ։ Մոտեցալ ու բարեկց։ Յես պարզ կերպով ու սառը պատասխանեցի նրա բարեկին։ Այդ ժամանակ նա խիեց ուսիս և ասաց. «Ի՞նչ ե, ընկեր Սերգո, չե՞ս ճանաչում»։ Բանից դուրս յեկավ, վոր ինձ հետ խոտում ե ինքը Լենինը։ Յես բերկրանքով սեղմեցի նրա ձեռքը։ Ակսեցինք խոսակցությունը։ Մի քանի բոպե հետո Իլյիչն առաջարկեց ինձ ընթրել իրենց հետ։ Բանից դուրս յեկավ, վոր իրենք ել ուտելու վոչինչ

չունեն՝ մի կտոր սև հաց և աղի ձուկ: Ահա և ամբողջ ընթրիքը:

Այս «ընթրիքից» հետո զրույցը տեղափոխեցինք լենինի «չքասենյակը»: Այդ մի գեղ խոտ եր, վորի մեջ և մտանք մենք: Թարմ խոտը հաշալի բուրմունք եր տալիս և տաք եր: Յես յերկար պատմում եյի, թե ինչ ե կատարվում քաղաքում, թե ինչպիսի տրամադրություն ե տիրում բանվորների և զինվորների մեջ, ինչ ե կատարվում մեր կազմակերպության մեջ, Պետրոգրադի խորհրդում, մենչեվիկյան կղկում և այլն:

Վլադիմիր Իլյիչը ինձ լսելուց և մի քանի հարցեր տալուց հետո ասաց.

—Մենչեվիկյան խորհուրդները վարկարեկեցին իրենց. յերկու շաբաթ առաջ նրանք կարող եյին առանց մեծ դժվարությունների իշխանությունը վերցնել իրենց ձեռքը: Այժմս նրանք իշխանության մարմիններ չեն: Իշխանությունը նրանցից խլված է: Իշխանությունն այժմս կարելի յե վերցնել զինված ապստամբության միջոցով և ապստամբությունը չի թողնի, վոր յերկար սպասեն իրեն: Այդ կլինի սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներից վոչ ուշ:

Այս ամենը յես լսում եյի լարված ուշադրությամբ: Տպավորությունը ապշեցուցիչ եր: Դեռ նոր եյին մեղթակել, իսկ նա նախադուշակում եր մի-յերկու ամսից հաղթական ապստամբություն...

... Այնուհետև Իլյիչը մի շարք դիրեկտիվներ տրվեց. ինչպես տանել աշխատանքը, ինչպես իսկույն ստեղծել լեզալ կենտրոմի կողքին նույն կենտրոմի ան-լեզալ բջիջը, լեզալ տպագրական որդանի կողքին—անլեզալ տպարան, վորպեսզի անլեզալ թերթերում առվի այն, ինչ թույլ չեն տալիս լեզալ մամուլում:

Շուտով ինձ վիճակվեց մի անդամ ևս գնալ Իլյիչի մոտ, ուր ինձ հետ տարա ընկեր Շոտմանին, վորը հաջողեցրեց Վլադիմիր Իլյիչի տեղափոխումը Ֆինլանդիա, և այնուհետև յես չտեսա Վլադիմիր Իլյիչին մինչև հոկտեմբերի 24-ը, յերբ նա, առաջին ան-

գամ բացահայտ կերպով հանդես յեկալ Սմոլնու հանգիսարանում:

Յերբ յես դահլիճ մտա, Վլադիմիր Իլյիչը վերջացնում եր իր ճառը Պետրոգրադի խորհրդի նիստում, հետեւյալ բացականչությամբ.

— Կեցցե՛ սոցիալիստական հեղափոխությունը:

Դահլիճը բառիս բուն իմաստով մռնչում եր հըրձվանքից:

Յերեկոյան թերթերում հաղորդագրությունն եր տպված այն մասին, վոր Լենինը տեղափոխվել է Սմոլնի և ինքն ե սկսում զեկավարել ապստամբությունը:

Այս՝ լրագրողները չեյին սխալվել:

Լենինն իր յերկաթե ձեռների մեջ վերցրեց Հոկտեմբերյան հեղափոխությունը կազմակերպելու գործը և հասցրեց այն հաղթական վախճանին»:

#### 4. ՍԵՐԳՈՆ Ե ՀՐԱՄԱՌՈՒՄ

Լուսաբացին միայն քնեց հարավային Ռուսաստանի արտակարգ կոմիսարը: Նրա զինվորական մահճի մոտ, յերերող սեղանի վրա թափթփված եյին փոկե խճճված սուսերակալը, ծանր մառւզերը փայտե պատյանի մեջ, մաշված ուղմաղաշտային պայուսակը՝ ծալված անկյուններով: Իսկ սեղանի յեզրից քարշ եր ընկել մի թերթիկ, վորը չեղակի պոկված եր ուղմաղաշտային ըրքույկից և վորն շտապ գրված եր լայն-լայն ուղարկ ձեռագրով:

Տողերը ջնջված եյին ու կեղտուտված կապույտ պատճենաթղթով:

#### ՄՈՍԿՎԱ—ԼԵՆԻՆԻՆ

Արկեր և փամփուշտներ չկան: Փող չկա... Վեց ամիս ե, վոր պատերազմում ենք, փամփուշտները գնում ենք հատը հինգ ուրբակով: Վլադիմիր Իլյուչ, հաղորդելով ձեզ այս մասին, հավաստիացնում եմ,

վոր մենք բոլորս կը նկնենք անհավասար կովում, բայց  
մեր պատիվը չենք արադավորի փախուստով...  
Դրոգնու, Վլադիկավկազի բանվորների մեջ կա ան-  
դրդվելի վորոշում — կովել ու չհեռանալ: Լեռնցի  
ծողովուրդների համակրանքը մեր կողմն է: Թանկա-  
գին Վլադիմիր Իլյիչ, մահացու վտանգի պահին  
եղում ենք ձեզ մեր վորչույնը և սպասում ձեր ոգնու-  
րյան:

Կոմիսարը քնած եր ծանր, անհանդիստ քնով: Ինչ-  
վոր մի տեղ, կարծես հողի տակ, խուլ հարվածում եյին  
թնդանոթները, և յերբեմն նուրբ և քնքուշ զրնդում եր  
լուսամուտի շրջանակի ապակին:

Բայց յերբ հերթապահը կամաց ներս մտավ նրա  
սենյակը և թեթև դիպով նրա ուսին, կոմիսարն ան-  
միջապես զարթնեց և նստեց մահճակալի վրա:

— Ապարատի մո՛տ, — խոպոտ ասաց հերթապահը:  
— Նազրանն ե կանչում: Ինչ-վոր բան ե պատահել:

Հեռագրասենյակում տոթ երև ազմկալից: Փետրա-  
նըման ամպերի պես կախված եյին մախորկայի ծխի  
կապույտ շերտերը, պարզորոշ աշխատում եր Յուզը,  
թխիկացնում եր Բողոն, չըխկացնում եր Մորգեն:

Հեռագրիչներն արձակված վերնաշապիկներով  
նստած եյին բարձր աթոռակների վրա, ապարատների  
դիմաց, վորտեղ թափված եյին սպիտակ նեղ ժամա-  
վենների ճոխ կույտերը:

Կոմիսարը մոտեցավ ապարատին: Փայլուն գեղին  
բանալու տակից սողում եր անծայր սպիտակ ժամա-  
վենը, խաղված ընդհատ կետագծերով: Հեռագրիչը  
կոմիսարի վրա նայեց ճագարի աչքերի նման կարմրած,  
անքնությունից բորբոքված աչքերով, և մատների  
արանքով անցկացնելով ժամագիկնը, կարդաց, աշխա-  
տելով խլացնել ապարատի թխկոցն ու աղմուկը.

«Զեղ հասցեյագրված մեկ վագոն հրացանի փամ-  
փուշտները նազրան կայարանի ինքուշները բանել են:

Չեն թողնում անցկացնել: Ի՞նչ անենք: Ի՞նչ անենք:  
Ի՞նչ անենք: Պատասխանեցե՞ք: Պատասխանեցե՞ք:  
Սկսում են բեռնաթափել փամփուշտները: Կտանեն  
լեռները: Պատասխանեցե՞ք: Պատասխանեցե՞ք»:

— Հարցըրու, ինգուշները քանի՞մն են, — հարցըրեց  
կոմիսարը, մթագնած, խոժոռելով խիտ հոնքերը, —  
շուրջ հարցըրու:

Սողում ե հեռագրի ժաղավենը: Դանդաղ ե սո-  
ղում: Կետ-դիծ, գիծ-յերկու կետ: Յերեք կետ-դիծ:  
Մի վագոն փամփուշտ: Մի ամբողջ վագոն փամ-  
փուշտ: Իսկ մենք հատին հինգ ոռուլի յենք վճարում:  
— Մեկն ե, — ասում ե հեռագրիչի ուսի վրայից:  
— Ի՞նչն ե մեկ:

— Մեկ ինգուշ ե, — հեռագրիչը ժաղալով կարդում  
ե ժաղավենը: — Վոտքից-զլուխ զինված ե: Վոչինչ  
անել չենք կարող: Սպառնում ե մեղ բոլորիս սպանել:

— Այդ-պես, — մտածկոտ ասում ե կոմիսարը: —  
Հաղա մի ասա, վոր այդ ինգուշին կանչեն ապարատի  
մուտ: Թող ասեն, վոր Մերգոն նրա հետ ուղում ե  
խոսել:

Թխկացնում ե փայլուն բանալին հեռագրիչի ձեռքի  
տակ: Սողում ե սպիտակ ժաղավենը: Կետ: Գիծ:  
Կետ: Գիծ:

Կոմիսարն աթոռակն ընդհուպ մոտեցրեց ապարա-  
տին և հոգնած նստեց, ձեռքերը դնելով ծնկներին:

— Զի մոտենա, — հեռագրիչը ճոճեց գլուխը, ընդ-  
հատ չխկացնելով բանալին: — Նա չի գա, ընկեր Մերգոն:

— Կդա, — համոզված ասաց կոմիսարը, և կրկին  
անդամ, ավելի վճռական, ավելացրեց: — Կդա:

Դուռը շրխկացնելով, ներս վազեց ապարատների  
սենյակը ծածկագրողը, սեղանի վրա զցեց մի կույտ  
ծածկագրված հեռագրեր, նայեց սեղանի վրա ՚խոնարհ-  
ված կոմիսարի գանգուր մաղերով առյուծի գլխին, և  
նորից գուրս վազեց՝ իր հետեւից կրկին շրխկացնելով  
դուռը:

Ապարատի սենյակում ճիճթոց ե, ծուխ, աղմուկ:

Աչք ե ծակում ելեկտրական կաստավուն լույսը։ Իսկ պատուհանից այն կողմ դիշեր ե։ Մութ, ինչպես լինում ե լուսաբացից առաջ։ Խավար, խուլ դիշեր։ Ցեխ, անձրեվ։ Հունվար ամիսն ե։

Կմոտենա՞։ Զի՞ մոտենա։

Դարձյալ ճթճթաց րանալին։ Բոլորովին դեպի ժապավենը կուցավլ կոմիսարը, անհամբեր, աչքի տակից նայելով հեռագրիչին։

— Կարդա՞, խնդրեմ։

— Ի-ն-գ-ու-շ-ը, — տառ առ տառ կարդում ե հեռագրիչը, — ա-պ-ա-ր-ա-տ-ի մոտ ե։ Խ-ո-ս-ե-ց-ե-ք։

Կոմիսարն ուղղվեց, ինչպես լարը կտրված աղեղը, ուղղվեց, նայեց լուսամուտից մութ դիշերին, անձրևի պղտոր շիթերին, վորոնք անազմուկ ու արագ հոսում եին ապակու վրայով, մոայլեց այնպես, վոր խիտ սև հոնքերի տակից, կայծերի նման փայլատակեցին նրա բազեյի աչքերը։

— Հաղորդի՛ր, — հաստատ ե խուլ ասաց կոմիսարը։ Հաղորդի՛ր այսպես—խոսում ե Սերգոն, բարեվ։ Ինձ հայտնեցին, վոր դուք վարվել եք տմարդիութեն և գրավել եք փամփուշտներով վագոնը։ Նա մի պահ լրեց և դանդաղ, կարծես հիպնոզացնելով հեռու վում գանվող անտեսանելի անհայտ ինգուշին, շարունակեց, հատ-հատ արտասանելով յուրաքանչյուր բառ։ Յես չեմ հավատում, վոր ինգուշը կարող ե այդպես վարվել։ Առաջարկում եմ, ձեր անձնական պատասխանատվությամբ, ինձ հասցնել Վլադիկավելագ՝ այդ ժեկ վագոն փամփուշտը։

Նա նորից լրեց և ավելացրեց, թեթեվակի ժպտալով խիտ սև բեխերի տակից։

— Կցանկանայի անձամբ ձեղ տեսնել և չնորհակալություն հայտնել...

Յերեք բոպեյից հետո ժպտավենի վրայով սողաց պատասխանը։

— Լսում եմ։ Կհասցնեմ անձամբ։ Ուրախ եմ ձեղ

տեսնելու։ Ուրախ եմ ձեղ տեսնելու համար։ Բոլորը։ Կոմիսարը վեր կացավ, վոտով հրեց աթոռակը, և ժպտալով հեռագրիչին, լեռնականի թեթև քայլերով հեռացավ ապարատի սենյակից։

Յերկու որից հետո ինգուշը յեկավ կոմիսարի մոտ։ Ինգուշը հագել եր բրդոտ յափունջի, կարմիր բաշլուց կախված եր ուսերից։ Յափունջու տակից յերեսում եր կապույտ բեշմետը, արծաթապատ խանչալը կախված եր առջեկից, նեղ, շարովի գոտու վրա։

— Եղ ինչո՞ւ համար եր, յեղբայր, — ժպտալով հարցրեց կոմիսարը։

Ինգուշը տարածեց ձեռքերը։

— Արևելցին սիրում ե կրակել, — արագ խոսեց նա։ Առավոտը վեր կացավ՝ կրակի։ Ճաշին կրակի։ Յերելոյան կրակի։ Հարսանիք ե, զոնալը յեկել ե, խաղողը հասել, կրակել ե պետք։ Դու, Սերգո, հասկանում ես, ինքդ լեռնցի յես, արևելցի։ Մի ամբո՞ղջ վագոն փամփուշտ։ Ինձ ել հերիք կաներ, տղայիս ել, թոռանս ել։ Կրակի՛ր՝ ինչքան քեֆդ տա։ Դրանից ել լավ բա՞ն։ Նա շրթունքները լպստեց և խոնարհ կերպով ավելացրեց։

— Դե, բայց քանի վոր Սերգոն ե հրամայում...

#### 5. ԽՈՐՃՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԶԻ ԿՈՐՉԻ

1918 թվի հունվարի վերջին, գեներալ Շկուրոյի «սև գայլերը»— դենիկինյան բանակի ջոկովի թոկից փախածները համառ կոփիներով մոտեցան Վլադիկավեկին և դրոհեցին քաղաքի վրա։ Քաղաքը պաշտպանում ելին բանվորական գումարտակները, կարմիր բանակի ջոկատները, կամավոր ինգուշները։ Պաշտպանության գլուխ ելին կանգնած Որջոնիկիձեն, Դիակովը, Տասույը։

Ֆրոնտը գտնվում եր 150 քայլի վրա այն տանից,  
վորտեղ տեղափոխվել եր Որջոնիկիձեյի շտաբը:

Հրացանների փամփուշտները շխկում եյին տան  
պատերին: Կտուրները, սիսեռների պես, դժվարմիաց-  
նում եյին շրապնելի գնդակները:

Կոիվը գնում եր քաղաքի փողոցներում:

Յեվ ահա հերոսական կատաղի պայքարի վեցերորդ  
որը սպիտակներին ոգնության հասավ զրահապատ  
ավտոմեքենան:

Նա հանկարծակի նետվեց քաղաքի փողոցները,  
վորոնք դեռ գտնվում եյին բանվորների ձեռքում, դի-  
մահար գնդակոծեց քաղաքը պաշտպանողներին և ամ-  
բողջ թափով սլացավ ծայրամասերով, գնդացրային  
անձրեւ տեղալով տների վրա:

Այնուհետև նա խփեց թերից, հանկարծակի դուրս  
թռչելով կողքի փողոցից, նետվեց դեպի դիրքերը և  
գնդակոծեց նրանց սպանիչ կրակով:

Այդ պահին դիրքերի առաջավոր գծի վրա հանկարծ  
յերեաց Սերգո Որջոնիկիձեն: Նա հանգիստ ու գործի-  
մաց կերպով հարց ու փորձարեց մարտիկներին զրահա-  
պատ մեքենայի մասին: Վո՞րտեղից յեկավ: Ի՞նչպես  
յեկավ: Արդյոք շա՞տ մոտեցավ:

— Պետք ե վոչչացնել այդ զրահապատը, — ասուց  
նա՝ լսելով մարտիկների պատմածները: — Պետք ե ահա  
այսպես անել: — Նա անցավ դիրքերով, պատճեներից  
ուշադիր դիտելով մոտակա փողոցները: Գնդակները  
սուլում եյին նրա դլմի վրայով, փորում հողը հենց  
նրա առաջ: — Ահա այստեղ պետք ե դնել ականանե-  
տը, — ասաց նա: Ահա այսպե՞ս: Յերբ զրահապատը  
նորից կհարձակվի ձեզ վրա, թողեք մոտենա և վրա  
տվեք ականանետից: Նախ պետք ե նրան տակից  
խփել, վորպեսզի նա չկարողանա հեռանալ, իսկ հետո  
դիշերով վերցնել: Ահա բոլորը:

Սերգոն ժամանակ թիթիւացնելով իր շուրջը կանգ-  
նած գուղաղավորների ուսերին:

— Աշխարհում սարսափելի վոչինչ չկա: Շկուրոն

զրահապատ ուներ, զրահապատը կդառնա մերը: Ճի՞շտ  
եմ ասում:

— Ճիշտ ես ասում, — բացականչեցին մարտիկնե-  
րը:

Սերգոն քիչ ել մտածեց և ավելացրեց.

— Իսկ մեքենան խլելու համար մարդիկ յես ինքո  
կըոկեմ: Դուք միայն խփեցեք այդ մեքենան:

Որվա վերջին զրահապատը դարձյալ հարձակվեց  
գիրքերի վրա: Բանվորները դիմավորեցին նրան ակա-  
նանետի կրակով, վորը դրված եր Սերգոյի ցույց  
տված տեղում: Նրա հաշիվը ճիշտ եր: Յերկրորդ  
կրակոցը պոկեց նրա զրահապատ ծածկոցները, և  
վնասված զրահապատ ավտոմեքենան, թեքվելով մի  
կողքի վրա, կանգնեց փողոցի մեջտեղում:

Մինչեւ ուշ յերեկո գիրքերից կրակելով՝ բանվոր-  
ները չեյին թողնում Շկուրոյի «գայլերին» մոտենալ  
իրենց ավտոմեքենային և տանել այն, իսկ գիշերը ջո-  
կովի գուղաղավորները գրավեցին մեքենան և տարան  
ավղակի յերկաթուղային արհեստանոցները:

Մեկ որ հետո զրահապատը, արդեն կարմիր գրո-  
շակը վրան, հատու գնդացրային կրակով հնձում եր  
յերեկվա իր տերերին:

Միայն դեպի Դալանովով առւլը վոչ մի կերպ չկարո-  
ղացավ անցնել զրահապատը: Այնտեղ տանող ճանա-  
պարհը շատ վատ եր, — անձրեներով վողողված, արկե-  
րից ձագարածե ցրիվ տված: Իսկ այստեղ, առւլի գե-  
րեզմանոցում, դիրքեր եյին մտել կարմիր հրամանա-  
տարների դպրոցի կուրսանտները և յոթերորդ որն  
եր, վոր զապում եյին սպիտակների հարձակումները:

Կուրսանտները յերկու թնդանոթ ունեյին, բայց  
բոլոր արկերն արձակել եյին, և նրանց մնում եր  
պաշտպանվել հրացանային կրակով: Այնինչ սպիտակ-  
ները գերեզմանոցը ոմբակոծում եյին հրետանային  
մրրկային կրակով:

Ահա շուտով կդողան կուրսանտները և կնահանջեն:  
Փամփուշտներն ել արդեն վերջանալու վրա յեն: Յեվ

բոլորովին ել լուր չկա, թե ի՞նչ և կատարվում քաղաքում, վորից կտրված ե գերեզմանոցն ընդարձակ ամայի դաշտավայրով։ Վոչ վոք չի հանդպնում անցնել այդ դաշտը ցերեկով, թշնամու աչքի առաջ, արկերի և գլուխակների տարափի տակ։

Յեվ հանկարծ տեսնում են կուրսանտները, վոր դաշտով քաղաքից մարդ և գալիս։ Մեկ մարդ։ Քամին թափահարում են նրա յերկար վերարկույի փեշերը։ Փեշերը թափահարվում են, փաթաթվում յեկողի վոտներին։

Իսկ նա քայլում է ու քայլում, զգուշությամբ շըրջանցելով արկերից գոյացած ձաղարաձեվ փոսերը, և մինչև իսկ գլուխն ել չի բարձրացնում՝ շրապնելների վոռնացող պայթումները տեսնելու։ Կրակեցին սպիտակների գնդացիրները, կարծես քամին անցավ դաշտի վրայով, միաց հողը թափվող գնդակներից։

Իսկ մարդը քայլում է, հա՛ քայլում։ Մոտիկ, ավելի մոտիկ։ Բարձրացրեց ձեռքը, նշան է անում կուրսանտներին, ծիծաղում է։

Մերգո՛։ Կոմիսա՛րը։ Հրամանատա՛րը։

Հասավ Մերգո՞ն գերեզմանոցը, անցավ արկերից քանդված քարե ցած պարսպի վրայով, առանց շտապելու մտավ դիրքերը։

Ուրախ ու զվարթ ժպիտը յերեսին, փայլատակող ու խոշոր աչքերով, նա դանդաղ անցավ դիրքերով, ջերմագին և պինդ սեղմելով ամեն մի մարտիկի ձեռքը։

— Դիմացե՛ք, ընկերնե՞ր, — ասում եր նա։ — Դիմացե՛ք։ Կիրովը Մոսկվա յե գնացել ոգնություն խընդունելու։ Զեշնիա յեն ոլացել սուրհանդակները։ Կդա՛ սպնություն։ Խորհրդային իշխանությունը չի կորչի։ Դիմացե՛ք։

Նա անցավ բոլոր դիրքերը, սեղմեց բոլոր կենդանի ժնացած մարդկանց ձեռքերը, ցավով և վշտով կանգ առավ գիտակների մոտ, քննախույզ հայացքով նայեց նըրանց սառած, դալուկ գեմքերին, կարծես ուզում եր

նըանց ամբողջ կյանքում իր մտքում պահել։

Հետո զուրս յեկավ դիրքերից, նշան արեց կուբանտներին իր գորշ, բարձր մորթե գլխարկով և շտապքայլերով գնաց դեպի քաղաք՝ շրապնելների և գնդացքայլին տարափի տակ։

Նա վոչ մի անգամ յետ չնայեց, վոչ մի անգամ չըրարձրացրեց գլուխը։ Այդպես ել նա գնաց, հանդարտ, կենտրոնացած, անվեհեր, դեպի քաղաք, վորտեղ սպասում ելին նրա խորհրդին, նրա փաղաքշանքին, նրա խրախուսիչ կառագին։

Կուրսանտները կովեցին մինչև վերջին փամփուշը։



Պատ. Խմբագիր՝ Մ. Արմենյան  
 Տեխ. Խմբագիր՝ Ա. Գասպարյան  
 Սրբագրիչ՝ Վ. Ավագյան  
 Կոնտրոլ ուրբ. Ա. Շահբազյան

Գլամիտի լիազոր՝ կ—4712 Հրամ. 4400.

Պատվեր 1362. Տիրաժ 8000

Թուղթ 62×94. Տպագրակ. 2 մամ.

Մեկ մամ. 30720 նիշ. Հեղինակային  $1\frac{1}{2}$  մամ.

Հանձնված և արտադրության 10 դեկտ. 1937 թ.

Ստորագրված և տպագրության 23 փետրվարի 1938 թ.  
 Գինը 50 կ.

ՀՀ Ազգային գրադարան



NI 0139245

204

15368

ԳԻԱԸ 50 ԿՈՊ.

С. БЕЗБОРОДОВ  
Товарищ Серго  
Гиз Арм. ССР, Ереван, 1938 г.